



Տ Ա Ր Ե Ր Ք

Կ Ե Ն Դ Ա Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն


Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

(ՏԷՍ ԷՂ 51)

Թ. ՈՐՈՏՈՂՔ



**ՍՆԱՌՈՐԱՑ** մէջ միայն Որոճողք են որ մի անգամ կերած կերակուր-  
նին երկրորդ անգամ բերաննին բերելով՝ զայն վերստին կը ծաղբնու-  
Այս պատճառաւ իրենց ստամոքսը շորս խոռոչը ունի, սակաւագունից մէջ երեք,



Սոր խախացոց Ցանց  
ՉԼ 180. Ուշաբի ստամոքս

որք են որովայն, ցանցառեանի, հագարթերթիկ և խախացոց կամ ստոյգ ստամոքս կոչուածն (ՉԼ 180):

Բաց-ի այս յատկութենէ, որ բաւական է յինքեան զՈրոճողս 'ի միւս Ստնառու-  
րաց որոշելու, Հետեւեալ յատկութիւնքն ալ ունին. վերին ծնօտի վրայ գրեթէ միշտ

Հերձատամուկը կը պակսին, կամ հազիւ տարրական վիճակի մէջ են. նոյնպէս նաև շնատամուկը միշտ կը պակսին. իսկ աղօրիք՝ սովորաբար իւրաքանչիւր ծնօտից երկեր.



Ձև 181. Լամա կամ Ալժուզա



Ձև 182. Մշկապորտ այծեան

կու կողմը վեց վեց են, հատուածածեք, զօրաւորք, խորին կերպով հաստատուած, և երկու մահկաձև պսակներով: Ընդերաց երկարութիւնը քանի մի տեսակաց մէջ



Ձև 183. Ընձուզա



Ձև 184. Առէ



Ձև 185. Արտիկ

քան և եօթն անգամ անհատի մարմնոյն երկարութիւնը կը շափէ. լեզունին գրեթէ ամբողջապէս սկնային է. զօրաւոր և յետին տասինանի գիւրալարով: Անդամք երկ

կու սմբակապատ մատամբը կը վերջանան, և ասոնցմէ վերջանախ երկու եղջերեաց բիտք կը գտնուին՝ նախագիծք այլոց մատանց, վերնաձեռին և վերնաթաթի երկեր. կու ոսկերքն 'ի մի միացեալ են՝ զոր կանոն կը կոչենք: Որոճողք սովորաբար կոտոշ




Չկ 186. Այծեառ



Չկ 187. Կոխաշ

ունին. և այս կոտոշքն կամ ոսկրային և անկայուն են, կամ մորթապատ ոսկրային և կայուն, և կամ հաւասարապէս կայուն և ոսկրային, բայց միանգամայն եղջերաւ պատենիւ ծածկեալ:



Չկ 188. Վեռն

160. Բաժանուումն Որոճողաց. — Որոճողք սովորաբար երեք հոյլ կը բաժնուին.

Ա. Ուղտը. — Բ. Թանցրը. — Գ. Ելջերոջը.

Առաջնոց գլխաւոր յատկութիւնը կոտոշ չունենանին է. ասոնց կը վերաբերին Ուղտը՝ որքերկուճարապալից կուզեր ունին. Տանիկ ուղտը՝ որ ճարապալից կուզ մի մի այն ունին, և քայելու մեջ քան զՈւղտս երազ են. Լամա կամ Այծուղտ (Չկ 181), և Մշկապորտ այժեամն (Չկ 182):

Երկրորդը՝ կայուն կոտոշներ ունին, որք յոճանս, ինչպէս յՈւճուղտս (Չկ 183),

պարզ մորթապատ են՝ իսկ յայլս, օրինակ իմն Եզանց, Կոփուց, Աժից, (Չև 184) և այլոց՝ եղջերապատ են։ — Այս բաժանմանս կը վերաբերին վերոյիշեալ ընչ ուշոք և Յամոյրք՝ որ շատ բազմութեամբ Ափրիկոյ և Ասիոյ անապատից մէջ կը գտնուին. և զանազան տեսակք Արիարաց (Արտիկ, Մաքի, Խոյ), Աժից (Աժեամն, Նոխազ), Եզանց զորս Մարդիկ կրցած են ընտանեցընել։ Դարձեալ այս բաժանման կը վերաբերին Վիտնք (Չև 188), և Եղջերուածիք (Չև 189)։



Չև 189. Եղջերուածի

Հուսկ ուրեմն ՚ի յետին բաժանման դասադուած են Եղջերուք, Եղջիկք, Քարայծք, Աժքաղք, և այլք բազումք, որք միւս Որոճողներէ դիւրաւ կը զանազանին իրենց սակորեայ և անկայուն կոտորներովն։

161. Օզտակարոճքիւնք Որոճողաց. — Մեզ ծանօթ եղող կենդանեաց դասուց մէջ, մարդկութեան ամենէն աւելի օգտակար եղող տեսակներն Որոճողաց կ'արգին մէջ կը գտնենք։

Ուշոք՝ զՄարդս և իւր վաճառքն Ափրիկոյ և Ասիոյ կիզանուտ անապատներէն անցունելով Հեռաւորերիկիրեն կը տանին. իրենց ուժոյն, կերակրոց անսուստութեան,



Չև 190. Եւք կամ Եղածի

և առանց շուր խմելու երկար ատեն դիմանալուն պատճառաւ, որ ստամբքի յատուկ կազմակերպութենէ կախումն ունի, նոյն երկիրներու բնակչաց բռնակրութեան ծառայող թանկագին կենդանիք կը համարուին։

Դարձեալ բռնակրութեան և մշակութեան ախտատանաց մէջ կը գործածուին Եզանց և Եղջերուաց բազմաթիւ տեսակներ (Չև 190 191)։ Եղջերուք Հիւսիսային բռնեփցուրտ գաւառաց մէջ Եզանց տեղ կը ծառայեն. վասն զի Եզիւք նոյն կլիմաներու չեն կրնար բնաւ դիմանալ։

Որոճողք, մանաւանդ ասոնց ընտանեցած տեսակները, Մարդուս սքանչելի միս

և կաթ կը մատակարարեն: Կակուղ և երկայն մազեր ունեցող տ: ստիքն, քնչպէս լա-  
մա, Ալբուկա, Ուղտամաքի, Թիպետի և Գալսիիի Այծերն, Սլանիոց և Անկիրիոց  
Ոչխարքն մեզ բուրդ կու տան՝ որ 'ի բազմաթիւ արուեստս առաջնակարգի ինթէ է:



Ձև 191. Հաինգեր

անհամեմատ օգտակարութեամբ երկրին բերքերը կ'առատացնէ և կը բարւոզէ:

Այս դասու կենդանեացմէ արժանաւորք են առանձին յիշատակութեան նաև  
վերայիշեալ Վիտոնը, որք դէպ յառաջ ծածփազրիկ կըս կուտոյնր ունին, մազեր-  
նին բուրդի պէս կակուղ և երկայնէ, առհասարակ միւս յատ:ութեամբք Կովբու-  
կը մերձենան: Ատնց այլ և այլ տեսակները կան. կայ տեսակ մը որ Ռուսաստանի  
կողմերը կը գտնուի անտառաց մէջ և 'ի տէրութենէ խտրու արգիլեալ է ասոնց որ-  
արն: Կայ նաև տեսակ մը յԱլբերկայ՝ որ նոյն երկրին մէջ գտնուող Մոնաուորաց-  
մէ ամենէն մեծն է: Կը գտնուի նաև քանի մի ուրիշ տեղուանք, սակայն սրտորդք  
այնքան ասոնց ետեւէ կ'ըլլան՝ որ չեն թողուր բնաւ աճին: Մորթերնին օգտակար  
է և կը գործածուի, իսկ իրենց շորոցած միան՝ ընդարձակ անուպատաց մէջ ճանա-  
պարհորդող անձանց թանկագին սպար է: Այս կենդանեաց յարգն Արևմտեան  
գաւառաց բնակիչք շատ աղէկ կը ճանչնան:

### Ժ. Թանձրամորթք

162. Թանձրամորթք. — Թանձրամորթք այսպէս կոչուած են, վասն զի ստուար  
և Թանձր մորթ մ'ունին: Բաց ասկից իրենց եզական յատկութիւնքն հետեւեալքն  
են. ոտքերնին սմբակապառ է, և մատանց թիւը մէկէ մինչև հինգ կը փոփոխուի.  
Որոճողաց նման խոտակեր են, բայց ստամոքսնին միայն մէկ խառը օւնի: Ատաւ  
մանց ձև և կազմութիւնը խիստ կը փոփոխուի. սովորաբար երկու ծնօտից վրայ ալ  
հերձատամուկք կը գտնուին. շնատամուկք երբեմն ամենամեծ են. իսկ ազօրեաց  
պսակն ընդհանրապէս տափակ է, լայն, խորտարորտութեամբ չի. և ծաղաղութեան  
միջոց համապատասխան ատամանց պսակք ճշդիւ զիրար կը շօշափեն:

Հին աշխարհի մէջ Թանձրամորթից սակաւագոյն տեսակք կը գտնուին: Ի ցամա-  
քային կենդանեաց մեծագոյնքն այս դասու մէջ կը նկատենք:

163. Բաժանումն թանձրամորթից. — Նկատելով այս կենդանեաց սնդան և ուսից կազմակերպութիւնը, գիրենք հետեւեալ եղանակաւ կը բաժնենք.


Ա. Պատճառոր թանձրամորթը. — Բ. Սովորական թանձրամորթը.

Գ. Միասնակ թանձրամորթը:

Պատճառոր թանձրամորթից զիսաւոր յատկութիւնն՝ երկայն և ամենաչարժուն թիթն է. որ և ունելութեան սքանչելի գործարան է և պատիճ կ'անուանի: Այս բա.



Չև 192. Ռնգեղջիւր



Չև 193. Ձիագետի

ժանման վերաբերող կենդանեացմէ բրածոյից ժամանակ շատ տեսակք կային. ինչպէս Պտկածանիք, Մամուլք և Ահազազանք: Արդի ժամանակս միայն Փիղք Պնացած են հսկայակերբք՝ որոց երկու տեսակք կան, Ափրիկոյ և Ասիոյ. յետինք աւելի մեծ են:

Սովորական թանձրամորթք պատիճ չունին, և ոտքերնուն մատանց թիւն երկուքէ մինչև չորս փոփոխական է: Այս բաժանման կը վերաբերին Կնճթեղ՝ որ 'ի Հարաւային Ամերիկայ կը բնակի, Կինճ՝ ուսկից կը կարծեն թէ Խոզբուռ զանազան տեսակքն սերած ըլլան: Իսկ բրածոյ վիճակի մէջ՝ Ռնգեղջիւր (Չև 192), Ձիագետի (Չև 193), Հնազազան, Խառնազազան, և այլն:

Հուսկ ուրեմն Միասնակ թանձրամորթից բաժանումն՝ ծանօթ Ձիու ազգը միայն կը բովանդակէ, որ իւր ոտից կազմակերպութեամբ յայլոց կ'որոշի. այս է՝ իւր ոտքն ստուար սմբակապատ մատով մը միայն կը վերջանայ: Այս ազգն յինքեան զանազան տեսակներ ունի. սովորական Ձի՝ որ թաթարստանէ յառաջ եկած է, ուր մինչև ցարդ իսկ վայրենի վիճակի մէջ կը գտնուի. Էջ՝ որ Ասիոյ մեծամեծ անապատներէն կու գայ. Վագերաձի՝ 'ի Հարաւային Ամերիկոյ, և այլն:

164. Օգտակարութիւնք թանձրամորթից. — Այս դասու կենդանեաց մէջ ալ շատ օգտակար տեսակներ կը գտնուին: Հնուց 'ի վեր Մարդս կրցած է ընտանեցնել ըզ. Ձիւն՝ որ ինչպէս գիտնեք, մինչև ցայսօր մեզի անթիւ ծառայութիւնք կը մատուցանէ: Բազմատեսակ ինամար և մնուցանելու անթիւ եղանակք. ասոնց շատ ցեղեր ևս յառաջ եկած են. յորոց ոմանք ուժոյ զօրութեան, այլք երազընթացութեան և ձևոյն գեղեցկութեան կողմանէ միշտ կը փնտռուին:


Ձիոց մորթն սքանչելի կայինքը կը մատակարարեն, իսկ Փղացն, Ձիագետեաց և Ռնգեղջերաց՝ ստուարութեան և լայնութեան պատճառաւ նոյն երկրի բնակիչներէ հիդեր ծածկելու, վաճաններ շինելու, և այլն, կը գործածուին: Բաց ասկից, Փղաց և Ձիագետեաց բերնի ատամունք մեզի զփոսկր կու տան՝ որ շատ գործածական է, և իւր գործածութիւնքն ամենուն հանրածանօթ: Իսկ Ռնգեղջերաց եղջիրով՝ յարուետա թխախտոի տուփեր կը շինեն, սուսերաց երախակալք, և այլ ասոնց նման նիւթեր: Խոզբուռ սուրք և Ձիոց բաշը, իրենց ձգտականութեան պատճառաւ՝ ան կողիններ, բարձեր, և այլն, ընլու կը ծառայեն:

Հուսկ ուրեմն՝ բազմաթիւ Թանձրամորթից միւր Մարդուս ակտոթերի կերակուր կ'ըլլան: Կենաց և Խողից միտերն իրենց սքանչելի նաշակուան խիստ յարգի են: Կըսեն թէ ձագ Փղաց և Չիագետեաց մտերն ալ համեղ ըլլան: Շատ երկիրներու մէջ Չիու միւս ուտելու սովորութիւնն ալ մտաւ, որ սննդարար և դիւրագին է:

ԺԱ. Կի տ ա զ գ ի ք

165. Կիտազգիք. — Ատենօք զԿիտազգիք՝ Չկունք կը համարէին, վասն զի անոց նման լրոց մէջ կը բնակին, և մարմնոյ ձևով աւելի Չկանց քան Ստնաւորաց կը մերձենան: Բայց յետոյ ուշադրութեամբ քննելով տեսան որ Կիտազգիք Ստնաւորաց դասու կը պատկանին, վասն զի յետոց պէս Լերմարիւն կենդանիք են, արեան լըրջանն անոնց արեան յրջանին նման կը կատարի, կենդանածին են և իրենց ձագերը կաթամբ կը սնուցանեն:

Սակայն այս կենդանեաց կազմակերպութեան վերաբերող կարևորագոյն յատկութիւնք հետեւեալքն են. յետակողմեան անդամք չունին, սառնակողմեանք կարճ են, լայն, ամրողայէս մորթապատ՝ որով և լուղալու գործարանաց փոխարեւ կուած: Մարմիննին երկայն է և ձկնաձև, պարանոցնին ամենակարճ որ արտաքուստ չ'որոյրի, պոչերնին ստուար և հորիզոնաձև լուղաթևով կը վերջանայ, և այս յատկութեամբ Չկներէ կը տարբերին, վասն զի 'ի Չկունս նոյնն գազաթնահայեաց



Չկ 194. Կէտ

գրիք կեցած է: Փոքր և շարժական աչքեր ունին, ականձա կոնք բոլորովին կը պակսի. ստամուռք երկու ծնօտից վրայ ալ բազմաթիւ են, ամէնքն հաւասար, զիրար չեն շոյափեր, ծաքողութեան չեն ծառայեր, և միայն որսը բռնելու կու գան. սնոր համար կոնաձև են, սուր և կորածայր. իսկ քանի մի տեսակաց մէջ եղջիրատամակց փոխարկուած, սյուիքն է եղջիրա-

ներգային նիւթէ կազմեալ լայն թիթեղներով: Մորթն որ նորպոյ ստուար շարքի վրայ կը կենայ, կամ բոլորովին մերկ է, և կամ իւր վրայ անսոր մազեր ունի:

Կիտազգիք ամէնքն ալ նոյն տեսակ կերակրեղինօք չեն ոնանիր. ոմանք ծովային բոյսեր կ'ուտեն, այլք մեծագոյն մասամբ կակուղ կենդանիներ:

176. Բաժանումն Կիտազգեաց. — Այս դասու կենդանեաց այլ և այլ բաժանմունք կան, յորոց պարզագունին հետեւելով՝ զանոնք 'ի Խոտակիր և 'ի Ստոյց Կիտազգիս կը բաժնենք: Խոտակիր Կիտազգեաց մէջ ոնգունք ցուլի ծայրը կը գտնուին, ստինքը լայն վրայ, և անկակեր են. այս բաժանման կը վերաբերին Մանասք, Տիւկոնք, և այլն:

Ընդ հակառակն ստոյգ Կիտազգեաց մէջ ոնգունք զիսու գագաթան վրայ կը տնուուին, և այս ոնգանցմէ իրենց սնընդեան ծառայող կենդանեաց հետ միատեղ կլլած իրոյն մեծ մասը դուրս կը ցայտեցնեն, և երբեմն մինչև իսկ բարձրագոյն հետաւորութեամբ: Այս բաժանման վերաբերող կենդանիք բազմաթիւ են, ինչպէս Դիփիք որ գրեթէ ամէն ծովուց մէջ կը յաճախեն. Կիտաթեք և Կէտք (Չկ 194), որք բնեապին ծովուց մէջ կը գտնուին, և այլք:

167. Օգտակարորինք կիտազգեաց. — Ի կիտազգեաց, և մանաւանդ կէտերէ և 'ի կիտաթեւոց՝ ճարպ մի կը ստանանք, որ իւր հոտանիւթութեան պատճառաւ կիտի կամ Չկան իւր կ'անուանի, և իբր կիզանիւթ գործածական է: Ի վերոյիշեալ կենդանիս այս իւրոք խիստ առատ է, անոր համար նոյն կենդանեաց որոք մեծապէս շահուէտ կը համարուի: Այս նպատակաւ բազմաթիւ որսորդք ամէն տարի սահմանեալ ժամանակաց մէջ Հեռուոր նաւահանգիստներէ դէպ 'ի այն ծովիւր կը դիմեն՝ ուր վերոյիշեալ կենդանիք բազմութեամբ կը գտնուին:

Բաց 'ի այս իւրէ, որ իրենց գլխաւոր բերքն է, խոտակեր տեսակքն համեղ միս կը մատակարարեն: Վիշապաձկան գանկի խոռոչին մէջ սպիտակոց կիտի անուանեալ օգտակար ճարպը կը գտնուի. դարձեալ գորշագոյն յամպարը, որ նոյն կենդանւոյն ընդերաց մէջ կը գտնենք, և իւր անուշահոտութեան համար յուղեփեցաց միշտ կը փնտռուի: Հոսկ ուրեմն կիտից եղջերատամունքն՝ որ իրենց առանձնութեամբ բազմաթիւ գործածութեանց յարմար են:

### ԺԲ. Պարկաւորք

168. Պարկաւորք. — Պարկաւորք յստուկ կազմակերպութիւն ունեցող կենդանիք են. իրենց ձագերը անկատար փեճակի մէջ կը ծնանին, այն պատճառաւ մայրըն որովայնին առջև մորթոյ ծալքէ ձևացած պարկ մ'ունի՝ ուր գտնոնք կը պահէ, և մինչև որ կատարելապէս չձևանան և իրենք իրենց ապրելու կարող չըլլան՝ անկից դուրս չեն ելլար: Սոյն դասու կենդանեաց էգերու որովայնակոնքը պարկաւոր ու կիրք անուանեալ երկու յստուկ ոսկերք ունի, որոյ վրայէն վերոյիշեալ մորթն կը ձգուի, որով և պարկն կը ձևանայ:



Չև 196. Ագեժալ

Ոմանք պտղակեր կամ խոտակեր են, այլք ճճիներ կամ մանր կենդանիներ և հաւկիթներ կ'ուտեն. և կան տեսակներ ալ որք շաղղակեր ըլլալով՝ կուզերու, Աշուէտներու և Փայլոց նման իրենք ևս մեծամեծ կենդանիք կ'որսան: Սովորաբար մեծաւ մասամբ բնակութեանց մերձաւոր տեղումնք կ'ընթանան, հաւնօցներու մէջ ըզկենդանիս կը շարճեն, և երբեմն մինչև իսկ հօտերու վրայ կը յարձակին:

Գլխաւոր տեսակքն են Ագեժալ (Չև 196), Պարկերէ, (Չև 197), և այլն: Ագեժազներու գլխաւոր յատկութիւնքն իրենց ոտից կազմակերպութիւնն է, այնպէս որ այս կենդանեաց յետակողման անդամքն երկայն են, ստուար և զօրաւոր,

մինչդեռ առաջակողմանք կարճ են և տկար, մինչև այն աստիճանի՝ որ կենդանին սովորաբար զանոնք քարելու ամենևին չի ծառայեցներ: Թէ և իւր յեռակողմանս ոտից վրայ կանգուն կը կենայ, սակայն դարձեալ կենդանւոյն մեծ յենարան մի կը



համարուի միանգամայն նեցուկ և իբր հինգերորդ անգամ՝ իւր երկայն և զօրաւոր պոչն: Իւր պոչոյն օգնականութեամբ այնպիսի երազ կ'ոստնու՝ որ Եղջերուի մը կրնայ հաւասարիլ. օգոյ մէջ մինչև երեք չորս մեղր կը բարձրանայ, և մինչև ութ կամ տասն մեղր հեռաւորութեամբ տեղ կը կտրէ: Երկչոտ կենդանիք են և դիրաւ գերութեան կը վարժին:

Պարկերէք Միջատակերք են, և ասամային դրութիւննին միւսներու ա ասամային դրութենէն բոլորովին կը տարբերի. գրեթէ ամէնքն դիչերային են: Կայ տեսակ մը որ մեծութեամբ Կատուի կը հաւասարի, սակայն այլք աւելի պզտիկ են, և կան ալ որ Մկէ աւելի մեծ չեն:

Չև 196. Պարկերէ

մեղ ըլլալով որորդութեան նիւթ եղած են, և գիրաւ կ'որսացունին՝ վասն զի սու վորաբար չեն կրնար արագութեամբ վազիլ. այն պատճառաւ կան տեսակներ որ երբեմն բազմութիւն էին՝ բայց արդ խիստ նուազեցան:

Իսկ մեծամեծ տեսակաց մորթը խաղախորդութեան արուեստի ազնիւ կաշիներ կ'ըլլան:

169. — Օղտակարորոյնք Պարկաւորայ. — Քանի մի տեսակաց միսն հաւ

### ԺԳ. Միաճակը

170. Միաճակը. — Միաճակը կենդանիք Ստնաւորաց և Թռչնոց մէջ անցք մի կը կազմեն: Համընդունարան մը միայն ունին, և ատամնային դրութիւնն տարրական է. ոմանց եղջերանման թիթեղներէ ձևացած ծնօտքը Բաղերու կտուցին կը նմանին, իսկ ոտքերնին թաղանթակապ են:



Չև 197. Փշամորթ


Մինչև ցարդ երկու անգլուստ տեսակք միայն կը ճանչնանք, ասոնք են Յուկեղք (Չև 216) և Փշամորթք (Չև 217):

Յուկեղք լրային կենդանիք են. լայն կտուց մի ունին որ Բաղերու կտուցին կը նըմանի, և այնու զցեխը կը փորեն. մորթերնին կակուղ և խիտ մազերով ծածկուած է: Կարճ և զօրաւոր ոտքերնին՝ պնդակազմ եղունգներով զինեալ Հինգ մատունք ունին, որք լայն թաղանթով մը իրարու հետ միացած են: Առուակաց եղբրները կ'ապրին և հսն իրենց

ընկադրանն կը շինեն. մեծաւ դիրութեամբ ջրոց մէջ կ'ընկզմին, կը լուզան, և գլխաւորաբար ճնիւնեքով և ջրային կենդանեօք կը սնանին:

Բ. ԹՈՂՆՈՂ

171. Թռչունը. — Թռչունը ձուածին ծննդագործութիւն ունեցող Ստնաւոր կենդանիք են, մարմիննին փետուրներով ծածկուած, առաջակողմեան անդամք թևոց փոխարկեալ են, և շնչառութիւննին թոքերով կը կատարեն:



Օղջն այս կենդանեաց ոչ միայն թոքերուն մէջ կ'ընթա, նայ, այլ իրենց ունեցած յատուկ կազմակերպութեան պատճառաւ թոքերէն (Չև 198) մարմնոյն խոռոչներուն մէջ, և մինչև յոսկերս կ'երթայ: Թռչնոց այս կազմակերպութիւնն իրենց յատուկ եղող շարժանց հետ կը համաձայնի. որովհետև ըստկամս զանոնք աւելի կը թեթևցնէ կամ աւելի կը ծանրացնէ, ըստ որում կամ բարձրանալ ուզեն մթնոլորտին բարձրութեան մէջ՝ և կամ վար իջնել:

Իրենց կմախքը (Չև 199) թէպէտ և Ստնաւորաց կմախքին դրութեամբ կազմը,


Չև 198. Հաւու թօք

ւած է, սակայն 'ի մասնաւորի նշանաւոր տարբերութիւնը ունի, որսցմով իրենց էութեան աւելի ևս կը համաձայնի:

Այսպէս ոսկերքն առ հասարակ նուրբ և թեթև են, վասն զի դատարկ են և ծուծ չունին: Երեսնին գրեթէ ամբողջապէս ծնօտներէ կը ձևանայ, որք դէպ յառաջ կ'երկարին և կտուրով կը վերջանան. այս կտուրը նոյն կենդանեաց ունեւութեան գլխաւոր գործարանն է և ըստ տեսակաց կը ձևափոխի (Չև 201, 202, 203): Ամենեւին ատամուկը չունին, ստորին ծնօտը թմբկային ոսկր անուանեալ միջակայ ոսկր մը ձեռօք զանկի ոսկերաց հետ յօդաւորեալ է: Ծոքրակային ազանց թիւը զանազան տեսակաց մէջ ըստ բնաւորութեան և ըստ սրունից երկարութեան յաճախ կը տարբերի: Թիկնային ողուկը երբեմն անշարժ կերպով իրերաց հետ կցած են, իսկ կը կուպայնք կը շարժին: Նուրբ կուկերն լայն կրծոսկեր մը վրայ միացած են, որոյ միջուկայրն երազաթուի տեսակաց մէջ գոգաձև է: Անրակը 'ի մի ձուպելով՝ զհաշքայ ոսկր կը կազմեն: Ողբերնին միայն երեք որոշեալ մատուկ ունին: Աւլան և վերնաթաթաթի ոսկերքն 'ի մի ձուլուած են: Մատանց թիւն երբեք չորսէ աւելի չէ, և ոչ իսկ նուազ քան զերկու. ամէնքն ալ եղնզաւոր են, և ասոնց երկարութիւնն և կորովութիւնն ըստ բնութեան տեսակաց կը փոփոխի:

Թռչնոց մարմինը ծածկող փետուրք եղէրային են, ձողէ մը կը բաղկանան՝ որոյ վրայ մազեր կը բուսնին, և նոյն մազերու վրայ քանի մի տեսակաց մէջ՝ զարձեալ

կրկին մազմզուկներ կան: Այս փետրոց ձևը մարմնայն այլ և այլ մասանց վրայ կը տարբերի. օրինակ իմն, վերնագոյն անդամքն ծածկող երկայն և կարծր փետուրք,



Չէ 199. Կծակը Տարմորտի

կայն ամենապարզ դասակարգութեամբ՝ մենք զասոնք վեց կարգ կրնանք բաժնել հետեւեալ կերպով.

- Ա. ՅԱԾԵՏԱԿՆԻՔ — Բ. ԶՆՃՂՆԱԶԳԻՔ — Գ. ՄԱԿՈՂՆԻՔ — Դ. ՀԱՌԴՂՆԻՔ
- Ե. ԲԱՐՁՐԱՍՐՈՒՆԻՔ — Զ. ՄԱԵԿՈՏՈՒՆԻՔ

### Ա. Յափշտակիչք

173. Յափշտակիչք. — Յափշտակիչ Թռչունք՝ զօրաւոր և հատու կարճ կտուց մ'ունին, որոյ վերին մասն 'ի ստորնայն աւելի երկայն և սուր է, իսկ արմատը մոճ անուանեալ զեղնագոյն նիւթով մը ծածկուած՝ որոյ մէջ ռնգունք կը բացուին: Արունքնին չափաւոր երկայնութեամբ և զօրաւոր են, չորս երկայն և չարժական մատունք ունին՝ յորոց երեքն առաջակողմեան են և մին յետակողմեան, ուժեղ և կրածայր եղունգներով, որոնցմով իրենց ողջ կամ մեռեալ՝ որոք դիրաւ կը յափշտակեն, կը բռնեն և կը յօշոտեն:

174. Բաժանուումն Յափշտակիչ Թռչունց.՝ Յափշտակիչ Թռչունք՝ի Տունգեղնայինք և 'ի Գիշերայինք կը բաժնուին:

Տունգեղնայինք կողմնակի աչքերով միջալսի գլուխ մ'ունին, սրունքնին սուփորաւոր մինչև մատանց սկզբնաւորութիւնը փետրային է՝ բաց 'ի մատանց, կարծրափետուրք են և գրեթէ ամէնք լուսով իրենց պիտոյքը կը հողան: Այսպէս Անգղ (Չէ 200), Վարազհաւ ( Չէ 201), Արծիւ, Յին, Բագէ, Ճուռակ:

Գիշերայնոց զուգը սովորաբար աւելի մեծ է, և խոշոր աչքերն դէպ յառաջ գլխու գաղաթան վրայ կը գտնուին, իսկ երեւնին պատկաձև շարուած պինտ փետուրներով շրջապատու է: Ամենակարճ սրունքնին և մատերնին՝ սովորաբար մինչև իրենց կծկող՝ զօրաւոր և կարծր եղունգները փետուրներով ծածկուած են: Փետրոց մազերը փափուկ և կակուղ ըլլալով թռչելու միջոց ամենեկին շտապ չեն հաներ, այս պատճառաւ գիշերները (վասն զի նոյն ատեն մէջտեղ կ'ըլլեն) առանց աղաղակի լուսթեամբ կը յարձակին իրենց կենդանի որսոյն վրայ և զայն կը խլեն: Այսպէս են Բու, Բուէճ, Հաւապատիր, և այլն:

175. Օրորակարոյրիւնք Յափշտակիչ Թռչնոց. — Ի յափշտակիչ Թռչնոց ոմանք մարդուս օգտակարք են, այլք վնասակարք:



Ձև 200. Շիկանդ



Ձև 201. Վարդահա

Օրինակ իմն Տուընիւնայնոց մէջ կան քանի տեսակք՝ որք վայրի օգտակար կենդանիքն և հաւերը կը շնջնն: Ընդ հակառակն Անգեղք մեռած գիւղակներ ուտելով՝ օդոց ապականութիւնը կ'արգելուն, և գիշերային շատ տեսակներ՝ մշակութեան վնասակար եղող բազմաթիւ կենդանիք կ'որսան, ինչպէս զՄկուռն:

Թէ և իրենց միւր մարդուս սննդեան կրնայ ծառայել, բայց սովորաբար կարծր և անխորժ համ ունենալուն պատճառաւ ուտելի չէ:

Բուէճով եղած թռչնորսութիւնը զուարճայի և հետաքրքրական է. իր ժրմուռորկելովն և ցատքըտելով՝ անցնող Թռչուններն յինքն կը ձգէ, որք և յորսորդաց գիւրազոյն եղանակաւ կ'որսացուին:

### Բ. Ճնճղկազգիք

176. Ճնճղկազգիք. — Այս բաժանումը կազմող Թռչնոց բազմաթիւ տեսակք անթիւ փափուկութիւնք կրելուն պատճառաւ, գրեթէ անշնար է իրենց յատկութիւնքն ճշդիւ արտայայտել: Այսու ամենայնիւ ընդհանուր կերպով կրնոնք ըսել թէ Ճնճղկազգիք (Ձև 202, 203) զանազուն ձևով և մեծութեամբ կուտոցներունին, նըր բարորակ են, ոսքերնին ոչ մաշկապատ է և ոչ մազլուոր, սովորաբար պարզ չորս մատունք ունին՝ յորոց մին դէպ յետակողմն է: Թւերնին մեծ է, իսկ հասակնին փոքր կամ միջակ, շարժմունքնին աղոյցժ և թեթև, Բազմաթիւ տեսակաց խոչափաղը՝ երգ գեղգեղելու համար յատուկ մկուռներէ կը բաղկանայ:

Ճնճկազգեսաց անըղեան ծառայող կերակուրք բազմատեսակ են. ոմանք միջև տիւք կը սնանին, այլք հատերով, և կան ևս որք թէ բուսական և թէ կենդանական նիւթեր կ'ուտեն:

Այս բաժանման կը վերաբերին ամենայն երգիչ Քուչուքը, և գաղթող Քուչուց մեծադղն մասն: Գլխաւոր տեսակք են Աղկիոն, Աւթագիաց, Կտաւազաղ, Միծառն, Ճանճահաւ, Կոլիբրի (Ձև 203), Արտոյտ (Ձև 204), Տուարածիկ (Ձև 205):



Ձև 202. Ժնճղուկ




Ձև 203. Կոլիբրի




Ձև 204. Կտաւազաղ Արտոյտ

Տորդիկ, Երաշտահաւ (Ձև 206), Տրաքիլոս, Դեղնուկ (Ձև 207), Ագուաւ, Փիլետոն, Եկբանիկ, Դեղձանիկ, Խայտիտ, Սոխակ, Սարեակ, և այլն:

177. Ոգտակարութիւնք ճնճկազգեսաց. — Ճնճկազգիք Մարգուս ըստ բաւականի օգտակարք են. բազմաթիւ տեսակաց միսն համեղ կերակուրք կ'ըլլան, ինչպէս Տորդիկներու, Դրախտապանաց, Արտոյտներու, և այլն, և այլն: Գրեթէ ամէնք մշա-



Ձև 205. Տուարածիկ



Ձև 206. Երաշտահաւ



Ձև 207. Դեղնուկ

կութեան վնասակար եղող միջատիւք կը սնանին: Ոմանք իրենց ձայնի գեղգեղմամբ և զանազանութեամբ զմեզ կը զուարճացընեն, ինչպէս Սոխակը, Թուխկատարը, Խայտիտը, Կարմրալանիք, և այլն: Հուսկ ուրեմն այլոց շքնազգիտ փետուրքն կանանց զարդարանքի կը ծառայեն, ինչպէս Դրախտահաւուց:

### Գ. Մ ա գ լ ո ղ ք

178. Մազողք. Չորս մատուցը ունին՝ յորոց երկուք դէպ յետակողմն են (Ձև 208): Առաջակողմեանց արմատն փոքր թալանթով մը իրարու հետ կը միանան, իսկ յետակողմեանք յերեքոց անջատակ են: Բոյներնին ծառոց բուններուն մէջ կը դնեն. ոմանք հատակիքք են, այլք միջատակիքք:

Բազմաթիւ մազողք փալիլուն գոյնով փոքր կամ միջահասակ կենդանիք են. Գլխաւոր տեսակք կը համարուին Տուկանք, Ելանաւորք իրենց մեծամեծ կտուցնե՛րովն: Արորակ, Թուլթակ (Ձև 209), Փայտփոր, Կկու, և այլն:

179. Օգտակարուքինք Մազդոյաց. — Մազդոյք Մարդուս գրեթէ ամենեւին կարևորութիւն և օգտակարութիւն չունին: Փոյտփորք թէպէտ և բազմաթիւ քնասկար կենդանիք կ'ուտեն, սակայն իրենց երկայն սուր և զօրաւոր կտուցներովն



Ձև 208. Գազաթնաւոր



Ձև 209. Թութակ

զծառու կը փորեն, մասնաւանդ անոյշ փայտի ծառերը. իրենց բոյներն հոն կը հաստատեն, և այնու զփայտ կը փճացնեն:

Իսկ Կկուն կենդանեաց մէջ եզական է, որովհետեւ իւր հաւկիթքն ուրիշ թռչնոց բոյներուն մէջ կ'ածէ, և զայն անոնց թիսեւ կու տայ:

### Դ. Հաւեղէնք

180. Հաւեղէնք. — Այս դասու թռչնոց կտուցն միջաշափ է, և իրենց կամարաձև ծամելիքը զտորիւր կը ծածկէ: Պոչերնին տասուերկուքէ մինչև տասն և ութ փետուրներէ, և ստամբունին մկնային զօրաւոր կողերէ կը բաղկանայ. Բնութեամբ ծանրաշարժ են, և սովորաբար ծառոց վրայ չեն թռչիր: Ընդհանրապէս իրենց բոյնը գետնի վրայ կը շինեն, և ձագունք բազմաթիւ կ'ըլլան. Երկրիս ամէն կողմը թէ տաք և թէ ցուրտ գաւառաց մէջ կը գտնուին, և տաք երկիրներու տեսակքն բազմաթիւ են՝ յորոց շատերը կենդանի փաշիւուն զոյներ ունին:



Ձև 210. Ազաճիք

կուրք կը պատրաստեն. գեղեցկագոյն և կամ նոյն իսկ հասարակ փետուրնին յա-

Այս դասու կենդանիք բնական եղանակաւ երկուքի կը բաժնուին, այսինքն Աղաւնիք (Ձև 210) և սոյոյզ Հաւեղէնք: Յետոնց կը վերաբերին Աքաղաղ, Կաքաւ Խայտահաւ, Հնդկահաւ, Լորամարդ, Սիրամարդ, Փասիան, Նապաստակտան, և այլ ևս բազմաթիւ ընտանիւսեր:

181. Օգտակարուքինք Հաւեղինաց. — Թռչնոց մէջ Մարդուս ընտրելագոյն և առատ բերք մատակարարողք Հաւեղէնք են, այս պատճառաւ Մարդս զանոյք կը պահէ կը դարմանէ և կը կրթէ. իրենց մտով ազնիւ և տեսակ տեսակ կերա-


րուեստս և 'ի տնական պիտոյս զանազան գործածութեանց կը ծառայեցնեն, իսկ իրենց պարարտութեամբ զերկիրս կը մշակեն: Թողունք որ նաև իրենց գեղեցկութեամբ զբախտաց և պարտիզաց զարդարանք կը համարուին:

Ե. Բարձրասրունք

182. Բարձրասրունք. — Բարձրասրունից կտուցի մեծութիւնն և ձևը փոփոխական, իսկ պարանոցն էրկայն է. ոմանց հասակը ամենամեծ է, ինչպէս նաև սրունք:



Չև 211. Արագիւ



Չև 212. Ճոյ

նին ամենարարձ: Չլամբք, Կակղամորթիք, Որդամբք, Միջատիք և նոյն իսկ քանի մի տեսակ խոտերով կը սնանին: Սովորաբար ծովերու, գետոց և վտակաց եզերքն, ճախճախոտ երկիրներ, աւազակոյտից կամ խիճերու վրայ կ'ապրին, և տարւոյն քանի մի եղանակաց մէջ կը գաղթեն: Այս բարձրասրունք թռչնոց կարգին, գլխաւոր տեսակք են Քարադք, Աջլկահաւ, Փարփար, Պիւդոս, Արագիլ (Չև 211) Մորպետ, Կտցար, Ճայ (Չև 212), Կռունկ, Քալահաւ, Զրահաւ, Փիւնակաթև, Խորդամարգ, և այլն: Դարձեալ այս բաժանման մէջ կը դասաւորենք Թռչնոց ուրիշ քանի մի տեսակքն, որք թէ և Լրային տեղեր չեն բնակիր, սակայն իրենց կազմակերպութեամբ Բարձրասրունից կը մերձենան, ինչպէս Չայլամն, Գազուար, և այլն:

183. Օղտակարտիւնք Բարձրասրունից. — Բարձրասրունից միւր սովորաբար պիտորժելի է: Քանի մի տեսակոց փետուրքն, մանաւանդ Չայլամանց, մեծայարգ և թանկագին են: Դարձեալ Չայլամանց հաւկիթներն իրենց շափագանց մեծութեան և պնդութեան պատճառաւ իբր զարդարանաց առարկայք կը գործածուին: Բաց առնոց, քանի մի տեսակք՝ միայն Չեունք սնանեխուն պատճառաւ, անոնց մեծ մասը կը ջնջեն. այսու օգտակարք են այն գաւառաց մէջ, օրինակ իմն յԵգիպտոս, ուր Չեունք յետին աստիճանի կը բազմանան:

184. Արտաքոյ կարգի է Չայլամանց մկնային զօրութիւնն, երբ ընտաննալու ըլլան՝ Չիոյ պէս Մարդկանց Հեծնալու կը ծառայեն, ամենայն դիւրութեամբ զանոնք կը տանին, և բեռինք կը կրեն: Սեաւք յաճախ կը գործածեն զատուք: Երբ մէկը վերաննստի կամ զինքը բեռնաւորէ, կենդանին կը զգայ, և իսկոյն կամաց կամաց քալել

կը սկսի, յետոյ երթալով իւր ընթացքը կ'երազէ, և քիչ աստնուան մէջ թևերը տա-  
րածելով այնքան երազութեամբ կ'ընթանայ որ կարծես ամենևին երկրիս չի դպչիր:  
Ուտից զօրութեամբն՝ անապատաց մէջ գտնուող գետին փորող կենդանեաց զամէնը  
կը յաղթահարէ: Այն աստիճանի բուսն զօրութիւն մ'ունի իւր այս գէնքն, որ եթէ  
այնու՝ ուժով մի Մարդուս կուրծքին զարնելու ըլլայ՝ հոն կը մեռցնէ, ինչպէս պա-  
տահած զէպքերը կը վկայեն:


### Չ. Մաշկոտունք

185. Մաշկոտունք. — Չանազան ձևերով կտուցներ ունին. կարճտուն են, և առա-  
ջակողմեան երեք կամ չորս մատունք թաղանթով իրարու հետ կը միանան. իսկ ու-  
տից յառաջակողմը երեք մատ ունեցող տեսակք՝ մատ մ'ալ ոտից յետակողմն ունին:

Մաշկոտունք ծովուց և գետոց մէջ ապրելուն պատճառաւ, փետուրնին տեսակ  
մի իւրով օժուած է՝ որ մորթերնուն վրայ գտնուող գեղձերէ կը զատուցուի. անոր  
համար նոյն իսկ երկար աստն չրոց տակ կենայէ յետոյ մարմիննին չի թրջիր: Այս



Չև 213. Հաւալուն



Չև 214. Վայրթ Սօդ

բաժանման կը վերաբերին Թևատ, Ճղակ, Սագ (Չև 214), Ջրազուս, Չկնկուլ,  
Ամար, Բադ, Կարաս, Հաւալուն (Չև 213). Տարմորթ, Սուզակ, և այլն:

186. Օգտակարորիւնք Մաշկոտունք. — Այս բաժանման վերաբերող կենդանեաց  
մեզ մատակարարած մսոյ քանակը՝ կրնանք ըսել որ գրեթէ Հաւեղինաց կը հա-  
ւասարի: Ի բաց թողլով մեզի ընտանեացած տեսակները, վայրենի տեսակաց ան-  
հատը այնքան բազմաթիւ են, որ իրենց երամովին անցքը՝ զանազան գաւառաց մեծ  
չափու աղբիւր է:

Քանի մի ընտանեացած և քանի մի վայրենի տեսակք իրենց խիտ աղուամազը կու-  
տան, որ յետին աստիճանի փափկութեան պատճառաւ ընտիր զօրածութիւնք  
ունի:

Սենեկայի եղերքն և ուրիշ անապատ կղզեաց մէջ՝ Մաշկոտունք տեսակներ գարե-  
րով այնքան բազմացած են, որ ասոնց ապաւտիւք և նոյն իսկ դիակներով պա-  
րարտութեանց ահագին շեղակոյտեր ձևացած են. այս օրուան օրս նոյն շեղակոյտք  
վաճառականութեան մեծ աղբերք կը համարին:

Շարունակելի